ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5

«ԵՐԵՎԱՆԻ Ա.ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 29 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

2021 թվականի հոկտեմբերի 29-ին տեղի ունեցավ «Երևանի Անդրանիկ Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նիստը: Նիստին մասնակցում էին խորհրդի 9 անդամներից 8-ը: Ներկա էր նաև ՀՀ ԿԳՄՄՆ ներկայացուցիչ Արմինե Օհանյանը:

Օրակարգում՝

«Երևանի Անդրանիկ Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթի անցկացում:

Լսեցին՝

Խորհրդի նախագահին՝ Իրինա Հակոբյանին, որը բացեց նիստը՝ հաղորդելով, որ դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար անցկացվում է մրցույթ: Նա զեկուցեց, որ մրցույթին մասնակցում է մեկ հավակնորդ՝ Ռուզաննա Սարուխանյանը:

Խորհուրդը որոշեց դպրոցի «Զարգացման ծրագիր»-ը ներկայացնելու համար հատկացնել 20 րոպե:

Ռ. Սարուխանյանը ներկայացրեց իր ծրագիրը: Նրան հարցեր ուղղեց խորհրդի անդամ Թեհմինե Կարախանյանը:

Այնուհետև տեղի ունեցավ բաց քվեարկություն: 8 «կողմ» ձայնով Ռուզաննա Սարուխանյանը ընտրվեց «Երևանի Անդրանիկ Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՈՐՈՇԵՑ

1. Մրցույթը համարել կայացած:

2. ՀՀ ԿԳՄՄՆ «Երևանի Անդրանիկ Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար հայտարարված մրցույթն անցկացվեց ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի» պահանջներին համապատասխան, որի արդյունքում ընտրվեց «Երևանի Անդրանիկ Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Ռուզաննա Սարուխանյանը:

3. Համապատասխան փաստաթղթերն ուղարկել լիազոր մարմնին:

Դպրոցի կառավարման խորհրդի նախագահ՝ Ի.Հակոբյան

քարտուղար՝ Է.Ստեփանյան